**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ**
**ՄԱՐԶՊԵՏ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**« 21 » հունվար 2021թ.** N 08-Ա

## *ՄԱՐԶԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 11-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով՝*

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

*1. Ստեղծել աշխատանքային խումբ՝ մարզային (տեղական) նշանակության ճանապարհների շինարարության, պահպանման ու շահագործման աշխատանքների կատարման նկատմամբ մշտադիտարկում իրականացնելու նպատակով:*

*2. Հաստատել աշխատանքային խմբի կազմը՝ համաձայն հավելվածի:*

*3. Աշխատանքային խմբի աշխատանքներին մասնակից դարձնել Եղեգնաձորի և Վայքի ճանապարհների շահագործում և շինարարություն իրականացնող կազմակերպության ներկայացուցիչներին:*

*4. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:*

Recoverable Signature

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Signed by: GRIGORYAN ARARAT 1310850550

*Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ*

*Հավելված՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետի*
*2021թ. հունվարի 21-ի թիվ*
*որոշման*

*Մշտադիտարկում իրականացնող աշխատանքային խմբի անհատական կազմը*

1. *Արմեն Դավթյան - ՀՀ Վայոց ձորի մարզպետի խորհրդական (աշխատանքային խմբի ղեկավար),*
2. *Խաչիկ Ասլանյան – ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի պետ (հանձնաժողովի անդամ),*
3. *Ռուբիկ Մինասյան – ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի քաղաքաշինության գլխավոր մասնագետ (աշխատանքային խմբի անդամ),*
4. *Նարեկ Մարտիրոսյան - ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչությունում խորհրդական՝ առանձին գործառույթներ համակարգող,քաղաքացիական աշխատանք իրականացնող*